Կարիերայի և պրակտիկայի կենտրոնի համագործակցությունն Որակի ապահովման կենտրոնի հետ

Կարիերայի և պրակտիկայի կենտրոնն աջակցել է ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնին 2014-2015թթ. ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կողմից իրականացված՝ «Բոլոնիան հայ ուսանողի աչքերով», և «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացված՝ «Հայաստանի պետական բուհերի ուսանողների ընդգրկվածությունը Բոլոնիայի գործընթացում», թեմաներով հետազոտությունների գործընթացներին, ինչպես նաև՝ ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված՝ «Դասախոսի և առարկայի գնահատումը ուսանողի կողմից» ուսանողական հարցման գործընթացին:

ԵԹԿՊԻ-ի Կարիերայի և պրակտիկայի, Որակի ապահովման կենտրոնները համատեղ իրականացնում են ԵԹԿՊԻ-ի շրջանավարտների գործատուների հարցում, որի նպատակն է գնահատել «ԵԹԿՊԻ-ի կողմից տրվող կրթության որակի համապատասխանությունը աշխատաշուկայի և հասարակության պահանջներին»:

Հնարավոր գործատուին ճիշտ ներկայանալու հմտություններ ուսուցանելու նպատակով ԵԹԿՊԻ-ի Կարիերայի և պրակտիկայի կենտրոնը՝ ԵԹԿՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ, անհատական և խմբակային խորհրդատվություններ է իրականացնում ԵԹԿՊԻ-ի ուսանողների և շրջանավարտների համար: